

պատկերով: Նրա ձայնը անողոր կերպով հրամայում է մեզ բաց թողնել կողմնակի կրքերը և անձնական չափերը, անտես առնել կեանքի հետ որ և է պայմանաւորութիւն (կոմպրոմիս) և հարկաւոր ժամանակ դռնը այդ բոլորը մեր պարտքի կատարմանը:

Բացի նրանից որ հայ ընթերցողը Աղամեանի գիրքը կարողանալ կը ծանօթանայ «Համէտի» խորհրդաւոր և խորհմաստ հիմնական դադարի հետ, բայց մի և նոյն ժամանակ Աղամեանի գրքի ընթերցանութիւնը միջոց կը տայ հայ ընթերցողին ծանօթանալ «Համէտի» լեզունդական ծագման և նրա ստեղծագործութեան աղբիւրի հետ, նոյնպէս և իրան Շէկապիւրի, այդ երեւելի անգլիացի հեղինակի, կենսագրութեան հետ ու նրա հաշակաւոր գրութեան մասին եւրօպացի ամենահայտնաւոր մտածողների կարծիքների հետ:

Աղամեանի գրքի մէջ ընթերցողը կը հանդիպի ինքնուրոյն և ստացական մտքերի ներդաշնակ միաստորութիւն: Գրել այդ տեսակ գիրքը, ինչպէս գրել է Աղամեան, կարող էր ամեն մարդ, որ ձեռք բերած կը լինէր Շէկապիւրի գրութեանը քննադատելու համար եւրօպական գրադարանում եւ դաժ հարուստ աղբիւրները,—բայց զգալ այն ինչ որ զգացել է Աղամեան և զգալ տալ ընթերցողին, ինչ որ նա զգալ է տալիս մեզ, երբ մենք այդ գիրքը կարդում ենք՝ կարող է միմիայն այն մարդը, որ ինքն գեղարուեստագէտ է, արտիստ է, որ ինքն դերասան է, որին վիճակվել է արդէն շատ անգամ «Համէտի» գրքի իմաստը անձամբ ըմբռնել բեմի վրա և ըմբռնել տալ իր խաղով հանդիսականներին, աղբիւրը նրանց վրա փոփոխանայ սիրոյ քնքշող զգացմունքը, բարկութիւն, տխրութիւն, զրուանք, սարսուռ: Ի վերջոյ խորհրդը ենք տալիս հայ հասարակութեանը կարդալ Աղամեանի գիրքը:

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՈՒՆԵՐ

1883—1886 թվականներին Ռուսաստանում ծխախոտի մշակութեան վերաբերեալ պաշտօնական հրատարակութիւնները երևում է հետևեալը. 1886 թվին մշակված է եղել 189,035 ծխախոտի պլանտացիաներ, որոնք ըստ ինքն և ինքն առնել 57 հազար դեռահատին տարածութիւն: Այդ պլանտացիաներից ստացված է 1886 թվին 4,057,386 պուդ ցածր տեսակի ծխախոտ որ երկու անգամ ավել է եղել լաւ տեսակի ծխախոտից: Կովկասում ստացված ծխախոտի քանակութիւնը անցեալ 1886 թվականին եղել է 52,141 պուդ:

«Արձագանք» շաբաթաթերթի № 17-ի մէջ տպված էր մի յօդուած Միլին-Ասիայի մէջ զետեղված հայերի մասին: Յօդուածը իր տեղեկութիւնները քաղում է մեծ մասամբ բողոքական մի-

սիօնարական ընկերութիւնների օրգաններից: Այդ լրագրներից մին, «Missionary Review» լրագիրը հաղորդում է որ Ազգայնականի այն ցեղը, Գիւլ-հայերը, որոնք նորեւրումն ապստամբեցան Ար-դու-Ռասման Խմբի դէմ, բաղկացած է 10,000 ընտանիքներից, որոնք ունեն ըստ հայկական ծագում իբրեւ ապացոյց, վերև յիշված անգլիական լրագրի թղթակիցները առաջ են բերում Գիւլ-հայերի բաղկացումը սովորութիւններ, որոնք կրում են իրանց վրա հայկական դրոշմ: Գիւլ-հայերը իրանք էլ խոստովանում են թէ իրանց նախահայրերը հայ են եղել: Յօդուածը պատմելով Միլին-Ասիայում գետնաշրջանում ուրիշ ասելի կամ պակաս բաղմամբ հայ գաղթականութիւնների մասին, ասում է թէ հաւատարմի մնալով հայոց եկեղեցուն, այդ հեռաւոր հայերը, զրկված են մնում հայոց եկեղեցու հոգևոր միջնորդութիւնից և միայն պատահմամբ Մոնտեղի և Զատիկի օրերը ճաշակում են հայոց եկեղեցու նշխարները, մի մի անգամ բերել տալով իրանց համար ձանաղար-հորդների ձեռքով Պարսկաստանի կամ Հնդկաստանի հայաբնակ քաղաքներից: «Արձագանք» յօդուածը վերջանում է հետևեալ խօսքերով: «Բողոքական միսիօնարները պնդում են նոյն պէս, որ այն սիրոյ համար, որ դարբերից ի վեր նրանք պահպանել են հայոց եկեղեցու նկատմամբ, պնդում են և կարեկցում են նոյն «միջակից, նկատմամբ իրանց անձը վտանգի, որպէս զի գնան նոյն հոգեպէս միջնորդին: Իսկ ո՞ր է մեր հոգևորականութիւնը»:

Ի Գիւլ-հայերի մեջ գրում են: «Մայիսի 13-ին սարսափելի կարկուտ տեղացի իգիւրի և չընկալաւոր գիւլ-հայերի վրա կարկուտ մեծ վնաս պատճառեց: Ամենից քստ վնաս կրեցին իգիւր-Վալա-յի և Բասուրիի այգիները և ցանքերը: Փոքրիկ ընդմիջումներով երեք անգամ տեղացի կարկուտը, առաջին անգամ 20 օրով տեղով, իսկ երկու վերջին անգամները այնքան երկար չը տեղեց և թեթեւ էր»:

Կովկասեան Գիւլ-հայերական ընկերութեան անդամները հրապարակ են ներկայ լինելու տա-րեկան ընդհանուր ժողովին, որը կայանաւոր է չորեքշաբթի օր, մայիսի 27-ին, երեկոյեան 8 օ-մին, ընկերութեան շէնքում մէջ: Նիստի պա-րասպանութիւնը առաւելանալու են. 1) ընկերութեան 1886 թվ գործունէութեան հաշիւը. 2) Թիֆլիսի Այգի-հայերական դպրոցի դրութեան 1886 թվ հաշիւը: 3) Ի. Խոսեօյի ղեկավարութեամբ «Իրա-տուն»-ների հարցի մասին գիւլ-հայերականութեան մէջ. և 4) ընկերութեան պաշտօնատար անձինք-ների ընտրութիւնը: Ներկայ կարող են լինել և կողմնակի անձինք:

հանդիսանալի գիւլ-հայ կուլիսի ցեղը հայ են եղել, և այլն...

Կիրակոսեան իր տան և իր հասարակական յա-րաբերութիւններում միւս Կիրակոսեանների հետ երբեք հայերէն չէ խօսում, իր վրոյ և երեխանե-րին մինչև անգամ արդեւոր է մայրենի լեզուով խօսել,—բայց շատ ուրախանում է երբ արտա-սահմանում մի գիրք է հրատարակվում, որտեղ գրվում, բարձրացնում են հայոց գրականութիւնը ու հոշակում հայոց լեզուն: Կիրակոսեան ինքն սաստիկ արեւածաթէր, ի բնէ աւանտուրիստ լինե-լով, կօպէկի տեղ չէ գնում մայրենի հողը և միշտ դադիւթում է, զաղթում ուրիշ, հեռու երկրները, պատրաստ է դնալ Ազգայնական, Հնդկաստան, կամ Ամերիկայի կարմիրմորթ հնդիկների մօտ,—բայց զգացված սրտով, արտասուքը աչքերին կար-դում է այդ տեսակ ֆրադաները. «հայերը, որտեղ էլ լինէին, միշտ հաւատարիմ են մնում լուսա-ւորչական եկեղեցուն»:

Երբ Կիրակոսեան իմանում է որ կաթոլիկ ու բողոքական միսիօնարների պրօպագանդան քանի դնում է տարածվում է հայերի մէջ,—նա փըր-փուր բերանին սկսում է բացականչել՝ «պէտք է խեղդենք, ջախջախենք, ոչնչացնենք մեր հայոց լուսաւորչական եկեղեցու այդ թշնամիներին», և ի հարկէ այդ իր արդար դայոյթը յայտնում է ոչ մայրենի լեզուով, այլ ուրիշ որ և է լեզուով, բայց ինքն անհոգ նստած է և կրթ ու խոլ է ձեռնարկում իրան երբ իմանում է թէ նոյն հայոց լուսաւորչական եկեղեցու մայր-աթոռը, ամբողջ հայութեան հոգևոր կենտրոնը, լուսաւորչական

Կիրակի, մայիսի 24-ին, Թիֆլիսի այգիներից միմիայն տեղի ունեցաւ 35 օսկ և րիչն և րի վարպետութեան հանդիսաւոր ձեռնադրութիւնը: Այդ 35 օսկերից աշակերտներից, որոնք հասան վարպետութեան աստիճանին, 30 հայեր էին (28 հայ-լուսաւորչական և 2 հայ-կաթոլիկ), 3 վրացի և 2 հրէայ: Օրհնանքին ներկայ էին՝ մէկ հայ-լու-սաւորչական, մէկ հայ-կաթոլիկ, մէկ վրացի քա-հանայ և հրէաների բարբի: Ներկայ էին ամբողջ օսկերիչների համբարը իր զրօշակով և բազմա-թիւ հրաւիրված կողմնակի անձինք՝ տղամարդիկ և կանայք՝ բոլոր թիւով մօտ 400 հոգի: Գրօշակի շուրջը կանգնած էին նոր օրհնութիւնները, ամեն մէկը իր պարանոցով դցած մի հատ քրիմանի չալ: Սկզբից աղօթք կարդալով երեք վրացիների օրհնեց վրաց քահանայ, յետոյ երեսուն հայերին միասին օրհնեցին երկար աղօթքներ կարդալով լուսաւորչական և հայ-կաթոլիկ քահանաները: Հայ քահանայն մի կարճատեւ ատենաբանու-թեամբ քաջատեղ օրհնութիւններին այդ հանդիսի նշանակութիւնը, յորդորելով նրանց հեռու մնալ ընկալաւորութիւնից, ստորութիւնից, խորագիտու-թիւնից, կեղծութիւնից և այլն, դրանից յետոյ ա-ղօթեց հրէայ բարբին: Իսկ այդ հոգևոր ծիսակա-տարութիւնից յետոյ զրօշակի տակ չոքեց օսկե-րիչ վարպետներից ամենաներքը, որի առաջ հե-թով չոքեցին նոր օրհնութիւնները. նա մի ձեռքով բռնելով իր առաջ խոնարհ կերպով չոքածի ե-կու բլթամատից, միւս ձեռքով երեսին երեք ապ-տակ էր տալիս: Գրանից յետոյ ամեն մի նոր օրհնված մատուցաբանի վրա ընծայում էր թան-գազին ընծաներ այն վարպետին, որի մօտ ինքը տուրք էր արձեւաւ, իսկ այդ վարպետները նրանց պարանոցով դցած քրիմանի շալերը վը-ցնում էին և կապում դարձեալ նրանց մէջքով: Այս բոլորը վերջանալուց յետոյ ամենքը նստեցին ձոխ սեղանի շուրջը, բացի նոր օրհնվածներից, որոնք սպասաւորում էին սեղանին:

Մայիսի 24-ին Թիֆլիսի Մուշտաիդ այգիում կայացաւ երկրորդ կօնցերտ-մօնստր յօդուտ ինվա-լիդներին: Այգիում հաւաքված էր բաւական ժողո-վուրդ:

Թիֆլիսի դուռնա իր մայիսի 22-ի նիստում գրադիցաւ ֆինանսական յանձնաժողովի ղեկու-ման քննութեամբ Արդէն առիթ ենք ունեցել հաղորդելու մի ուրիշ անգամ, որ ֆինանսական յանձնաժողովը քաղաքային վարչութեան ծախսը, որը տարեկան 70 հազարի է հասնում, փոքրաց-նելու համար մշակել է մի նախագիծ, որով հնարաւոր է համարում փոքրացնել վարչութեան մէջ վարձով պաշտօնակատարների թիւը, փոք-րացնելով մի և նոյն ժամանակ մի քանիսների ռոճիկները: Վարչութիւնը համաձայն չէ ֆինան-սական յանձնաժողովի ղեկուցման մէջ յայտնված

եկեղեցու սրբաւայր էլ միմիայն, իր բոլոր չինու-թիւններով, իր եկեղեցիներով, իր վեհարանով, իր ձեռնարանով՝ քանդվում, քայքայվում է և այս օ-պէին ուրիշ ոչինչ չէ ներկայացնում, եթէ ոչ ա-ւերակներ, փրատակներ մի ահագին կոյտ...

Եւ որովհետեւ Կիրակոսեանի երբեք չէ կարող հետաքրքրել իրանը, ներքին, սեփականը, այլ նրան հետաքրքրում է միմիայն հեռաւորը, օտա-րը, անհասկանալին ու անծանօթը, որովհետեւ բացի սրանից նրա ուրախութեան, հրճուանքին չափ չը կայ, երբ նա իմանում է թէ այս ինչ օ-տար ցեղը, այն ինչ օտար երեւելի մարդը՝ հայեր են եղել,—ուստի եւ էլ ուղում եմ ուրախացնել պ. Կիրակոսեանին և պատմել նրան հաստատ աղբիւրներից հաւաքած հետեւեալ հետաքրքրի տե-ղեկութիւնները, որոնք, յոյս ունեմ, կը լցնեն բոլոր Կիրակոսեանների սրտերը աննկարագրելի հրճուանքով:

Հաստատ աղբիւրից իմացայ որ ոչ թէ միայն Ազգայնականի գիւլ-հայ և րիչն և րի կուլիսի ցեղը հայ են, բայց և Բիւրմանիայի բնակիչները, Աբիսինիայի բնակիչները, և նոյն իսկ Ամերիկայի կարմիրմորթ հնդիկները՝ հայ են և ուրիշ: Բայց թէ ինչ պատճառով այդ վերջինների մօրթի գոյնը կ'արմարէ և,—այդ շատ պարզ ու հաս-կանալի է. նրանք կարմրել են ա մ օ թ ի յ, նախ որ այդքան հեռու են գտնվում իրանց հայ հայ-րենիքից և երկրորդ որ զոքում են թէ Ամերիկա-յում միակ ներկայացուցիչներն են հին Հայաս-տանի, մնացած լինելով մի և նոյն ժամանակ նա-

մօրթ հետ: Այդ պատճառով դուռնայի նիստում եր-կար վեհաբանութիւնների նիւթ դարձաւ այդ խն-դիրը: Ի վերջոյ ընդունելով որ առհասարակ քա-ղաքային վարչութեան մէջ կանցելարիական աշ-խատանքները չափազանց շատացել են, դուռնա յանձնեց վարչութեանը կաղմել ֆինանսական յանձնաժողովի հետ միասին, մի առանձին ղե-կուցում այդ խնդրի մասին և ներկայացնել դու-մայի քննութեանը:

Պետերբուրգում ֆինանսների միսիստութիւնը մշակում է մի նախագիծ, պարսկական մաքսա-նեղք ապրանքների Անգլիոյկապեան երկրոր մտց-նելուն առաջն առնելու համար:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԳԵՆԵՐԱԼ, ԲՈՒԼԱՆԺԻ

Ֆրանսիական նոր միսիստութիւնը կաղմա-կերպված է արդէն,—բայց այդ միսիստութեան զլինին չէ կանգնած ոչ Ֆրէյսինէ, ոչ Կլեմանսօ, և ոչ էլ Ֆլօշէ: Միսիստութիւնի խորհրդի նախագահ նշանակված է Բուվիէ, ներքին գործերի միսիստր նշանակված է Ֆալլէր, արտաքին գործերի՝ Ֆը-լուրանս, աղգալին լուսաւորչական՝ Սպիլլէր, արդարադատութեան՝ Մարդ, պատերազմական՝ Ֆէրրօն, ծովային՝ Բարբիէ, վաճառականութեան՝ Գոարէմ և երկրագործութեան՝ Բարդ: Նոր մի-սիստութիւնը արդէն մասամբ պարզել է իր ա-պագայ ընթացքի կերպարանը, յայտարարելով, որ՝ միսիստութիւնը առանձին խնամքով կը ձգտի իրագործել ներքին վերանորոգութիւն-ների հարցը, հետեւելով հաստատ, արժանա-վայել և զգոյշ արտաքին քաղաքականութեան թէ ինչ կերպով առաջ կը տան իր գործը այժ-ման միսիստութիւնը, և որքան կարող կը լինի յոյս ունենալ աղգալին՝ ժողովի աշակցութեան վրա,—այդ ապագան ցոյց կը տայ: Միսիստա-կան այդ փոփոխութեան մէջ թէ Ֆրանսիական հասարակական կարծիքը և թէ նոյն իսկ ամբողջ Եւրօպայինը աւելի հետաքրքրվում են մի ուրիշ հարցով, որը շատերի համար անսպասելի կերպով վերջացաւ: Այդ զինեալ Բուլանժէի պատերազ-մական միսիստութիւնը պաշտօնից զրկվել է: Գեո-մի քանի շաբաթ, մի քանի ամիս առաջ՝ այդ դի-նուորական միսիստրը իր անունով և իր ժողո-վրդականութեամբ թնդացնում էր ամբողջ եւրօ-պական քաղաքական շրջանները. նրա անունը այնքան գրաւիչ էր դարձել թէ Ֆրանսիական աղգի և թէ զօրքի մէջ, որ գերմանական կառա-վարութիւնը անկարող եղաւ սառնասրտութեամբ նայել աղգալին վրէժխնդրութեան այդ հերոսի վրա,—և սկսեց ամեն միջոց գործ դնել նրան հեռացնելու համար: Գինեալ Բուլանժէ մի քանի

հապետական, վայրենի դրութեան մէջ, կատարե-լապէս տ կ լ ու ու բ ո ռ ի կ՝ Ամերիկայի դար-գացած և քաղաքակիրթ աղբիւրի շրջանում:

Բացի սրանից կարող եմ հաստատ աղբիւրնե-րից հաղորդել և ուրախացնել Կիրակոսեանների սրտերը, որ Նապօլէօն առաջինի երեւելի զօրա-պետ Մ ի ւ ր օ տ (որ վերջը դաւաճանել է Նա-պօլէօնին), հայ է եղել, Մուրադեան աղգանունով որ Նապօլէօն երկրորդի երեւելի զօրապետ Բ ա զ է ն (որ նոյնպէս դաւաճանել է Ֆրանսիային), նոյնպէս հայ է եղել և նրա իսկական աղգա-նունը եղել է ոչ թէ Բաղէն, (Բաղէ) այլ Բ ա ր օ ւ ւ օ ղ և ա ն ց:

Սրանք հաստատապէս հայեր են եղել: Բայց կարծիք կայ, որ և շատ շուտով պիտի ստուգվի, որ և Սալլըրբի, անգլիական այժմեան առաջին միսիստրը՝ հայ է ծագումով և նրա իս-կական աղգանունն է Ս ա ր զ օ ւ ւ օ ղ:

Իսկ թէ Բ ի ւ օ մ ար կ ի ինքան հայ է, դա ար-դէն հաստատապէս ապացուցված է և նրա իսկա-կան աղգանունն է՝ Փ ի ւ օ մ ար զ:

Ումանք ենթադրութիւն են անում որ և գնեւ-րալ Բ ու լ ա ն ժ է հայ է և որ նրա իսկական աղգանունն է Պ օ ղ ո ս և ն,—բայց իմ կարծի-քով այդ ենթադրութիւնը դեռ ևս ապացուցված չէ կարելի համարել:

Իսկ թէ բոլոր անցած և ժամանակակից երեւելի վրացիները հայոց ծագում են ունեցել, և թէ գոնէ նրանց բոլոր մայրերը հայունիք են եղել,—այդ արդէն ապացուցված լրողութիւն է:

ԱՍԻԱՑԻ

նաւերը և օգնութեան ուրիշ միջոցներ: Նոյնպէս և հրամայեց ինքն ինքի զօրքերը շտապելով փրկելու իր զօրքերը:

Մերի, 23 մայիսի: Անդրկասպեան երկաթուղու առևտրական նշանակութիւնը մեծանում է. կայարանում զիջված է միջին-ասիական ապրանք, մասնաւորապէս ի նկատի ունենալով Մէրվի կենտրոնական դիրքը, առևտրականները մտադրութիւն ունեն խնդրամատոյց լինելու, որ այդ քաղաքում հիմնուի տնտեսական ապրանքների փոխանակութեան համար, իրենցով նման:

Վիէննա, 23 մայիսի: Չեխոսլովակիայի իշխանը այստեղից ուղևորվեցաւ Վիէննա քաղաքում համար:

Հոմ, 23 մայիսի: Պատգամաւորների ժողովում պատերազմական միջոցները յայտարարեց, որ կառավարութիւնը չի հրաժարվի այն առևտրական-քաղաքական նպատակներից, որոնք կապված են Մասսաչուսէթսի գրաւման հետ, և որ իտալական զենքի նշանակութիւնը վերականգնելու համար, վճարված է արշաւանք սկսել Արիսոնիայի դէմ, և ժողովին կառավարվել այդ նպատակի համար հարկաւոր փոխաւորութիւնը կատարել: Արիսոնիայի յայտարարեց, որ միջոցները կը դիմագրի Մասսաչուսէթսի հեռանալու առաջարկութեանը: Կառավարութեան յայտնած մտքերը պատգամաւորների ժողովը ուղադրութեան առաւ համարեալ միաձայն:

ՎՕԼՎԵՐԿԵՄՊՏՕՆ, 23 մայիսի: Պահպանողական ընտրողների միտնդում խօսեցած իր ճառում, լորդ Բանդոլֆ Չերչիլը, բուն կերպով յարձակվում էր անլիբերական զօրքեր և նաւատորմի վարչական կարգերի վրա: Չը նայած ահագին ծախքերին, Անգլիան կատարելապէս անպատրաստ է պատերազմի համար. հեծելազօրքը, հետևապէս զօրքը և թիակաւորները զօրաբաժինները շատ վատ են զինավորված. տեղափոխելու միջոցները շատ անբաւարար են. բերդերի մէջ չը կայ զենքի և պաշարի բերկար ընդհանրութիւնը. նոյն իսկ այնպիսի բերդը, ինչպիսին է Մալտա, այնքան պաշար ունի, որ հազիւ կարող է դիմադրել երեք շաբաթվայ պաշարման: Չերչիլը ուրիշ շատ փաստեր բերեց իր միտքը ապացուցանելու համար, և իր ճառի վերջում այն կարծիքը յայտնեց, որ այդ սխառեան գոյութիւն կունենայ մինչև այն ժամանակ, երբ վերջապէս անգլիական աղքատ բարձրաձայն կը պահանջի արմատական բարենորոգումներ մտցնել: Վերջիվ Չերչիլը յայտնեց, որ ինքը ունի այդպիսի բարենորոգումների պատրաստի նախագիծ, որ նա այժմ ուղղում է զարդանի պահել, ցանկանալով տեսնել թէ ինչպէս կը վերաբերվի աղքատ զենքի իրերի այն դրութիւնը, որի ճիշդ պատկերը ինքը ներկայացրեց:

Վիէննա, 23 մայիսի: Այստեղ եղած լուրերին նայելով, Սֆիլիպի աղբային մեծ ժողովը կը դուրս գար յունիսին:

ՆՕՎԻՐՈՐԴ, 24 մայիսի: Վաղվանից սկսվում է Ստարոբուրսկի հանքային ջրերի սեղծը:

ՕԿԵՍՍԱ, 24 մայիսի: Ծովերում լողանալու սեղծը սկսված է:

ՓԱՐԻՉ, 24 մայիսի: Պատգամաւորների ժողովը հաստատեց ներմուծվող չաքարի մաքսահարկը, և սկսեց ընկել դեռ Բուլանժէի ժամանակ ներկա-

յացված՝ օրինակի, որը վերաբերում է զօրքի կազմակերպութեանը: Ֆէրրոն յայտարարեց, որ ինքը միանգամայն հաւանութիւն է տալիս իր նախորդի օրինադրի մեծ մասին, մանաւանդ այն մասին, որը վերաբերում է զօրքի լրացնելուն: Բուլանժէին առաջարկեցին ընդունել զօրքի մի բաժնի հրամանատարութիւնը, բայց նա խնդրեց իրան արձակել երկարատե ժամանակով: Գենե-րալ Լէֆլօ հաստատում է իր առաջիկայ յայտարարութիւնը Բաղդադից կատարած միասնային մասին 1875 թ.ին Պետերբուրգում:

ԲԵՐԼԻՆ, 24 մայիսի: Յունիսի 6-ին Վիէննա կայարը կը գնայ Էմս, իսկ այնտեղից Գաշտէյն: ԲՈՒԴԱ-ՊԵՏՏ, 24 մայիսի: Թուրքի քաղաքները պատճառով Տիասայի ջուրը ծածկեց Սեզեղինի շրջակայքը, և փչացրեց մեծ տարածութիւն, որտեղից առատ հունձ էր սպասվում: Սեզեղինի մի մասը և շատ գիւղեր նոյնպէս լցվեցան ջրով: Մարդկանց հետ դժբաղդութիւն չէ պատահել. բայց հեղեղի պատճառով միւսները ահագին են:

Ս. ՊԵՏԵՐԲՈՐԳԻ ԲՈՐՍԱ	
Մայիսի 22-ին	
Ռեւուաց 1 բուրլ Լօնդոնի վրա արժէ	22 ⁵ / ₃₂ պէնտ.
— — — — —	187 ²⁵ / ₃₂ պֆ.
— — — — —	233 սան.
Ռսկի — — — — —	8 > 86 կ.
Մաքսային կուպոններ — — — — —	172 > —
Արծաթ — — — — —	1 > 30 >
Բորսային դիւկուններ — — — — —	41 ⁸ / ₈ > 60%
Պետական բանկ. 5% տոմս 1-ին շրջանի	99 > 62 >
— — — — —	2-րդ — 99 > 25 >
— — — — —	3-րդ — 99 > 12 >
— — — — —	4-րդ — 99 > 12 >
— — — — —	5-րդ — 99 > 25 >
— — — — —	6-րդ — — > —
Արեւելեան 5% փոխառութ. 1-ին շրջ.	100 > 12 >
— — — — —	2-րդ — 100 > 25 >
— — — — —	3-րդ — 100 > 87 >
Ներքին 5% առաջին փոխառութ.	267 > —
— — — — —	243 > —
51 ² / ₂ 0 բէնտա	102 > 37 >
Ռսկեայ բէնտա	192 > 50 >
Եւրոպայի կոնսոլիդաց. փոխառութ.	165 > 25 >
Նոր եւրոպայի կոնսոլիդաց. բէնտա	99 > 50 >
50% զրաւակաւն թղթեր կալուած.	— — — — —
— — — — —	168 > 50 >
— — — — —	98 > 87 >
51 ² / ₂ 0 զրաւակաւն թղթեր խերսօնի կալուած. բանկի	98 > 75 >
60% զրաւակ. թղթ. Խարկովի կալ. բան.	102 > 62 >
— — — — —	102 > 62 >
— — — — —	102 > 62 >
— — — — —	102 > 25 >
— — — — —	102 > 50 >
— — — — —	101 > 75 >
— — — — —	102 > 62 >
— — — — —	101 > 62 >
— — — — —	27 և 43 տ. 97 > 75 >
— — — — —	18 և 43 տ. 97 > —
Վ. Օլժիկո-կամսկի բանկի ակցիաները	678 > —
Ռուսաց երկաթուղիների գլխաւ. ընկ.	268 > —
Ռիբնի-Վ. Օլժիկո ընկ.	98 > —
Ս. Պետերբուրգի քաղաքային օրին. վարչակաւն	95 > 87 >
— — — — —	96 > 25 >
— — — — —	95 > 25 >
— — — — —	84 > 50 >
— — — — —	84 > 50 >
Ս. Պետերբուրգի բորսայի տրամադրութիւնը ֆոնդերի վերաբերմամբ հանդարտ է:	— — — — —

Խմբագիր-հրատարակող ԳԻՒԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՀԱՅԿԱԿԱՆ ՆՇԱՆԱԳԻՐԵՐ

ԿԱՆՎԱՅԻՎՐԱԿԱՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ

(Երկրից վարդան լիսիցեան)

Ծախվում է թիֆլիսի հայ զրաւաճառանոցներում, խիստեանի և եղբ. Արովեան-ներին խանութներում: Գինն է (առանց ճանապարհածախսի) 20 կոպէկ: Գումարով առ-նողներին 20% զիջում կը լինի:

Օտարաքաղաքացիք զինում են հետեւեալ հասցեով. Тифлисъ, Центральная книжная торговля. 1—3

Մամուլի տակից դուրս եկաւ և փաճաւում է Կենտրոնական զրաւաճառանոցում և Յ. Տէր-Սարգսեանի խանութում (Գործողայա փողոցի վրա)

ՇԵՔՍՊԻՐ

ԵՒ ԻՐ ՀԱՄԼԵԹ ՈՂԲԵՐԳԻՈԹԵԱՆ ԱՂԲԻՐՆ ՈՒ ՔՆՆԱԳԱՏՈՒԹԻՒՆՆԵՐ

աշխատասիրեց

ՊԵՏՐՈՍ Հ. ԱԴԱՄԵԱՆ.

Գինն է 1 ռուբլի.

1—10

ԷԼԻՔՍԻՐ ԱՏԱՄՆԵՐԻ ՀԱՄԱՐ (ELIXIR DENTIFRICE)

ԲԵՆԵԴԻԿՏԵԱՆ ՀԱՅՐԵՐԻ

ՍՈՆԻՒԱԿԻ ԱՐԲԱՅՈՒԹԻՒՆՅՑ (GIRONDE)



Առումների համար Բենեդիկտեան հայրերից պատ-րաստած էլիքսիրի ամենօրեայ զործածութիւ-նը, մի քանի կաթիլներ ջրի մի կէս բաժակի մէջ, պահպանում է առամները փշանալուց, սպիտակ է դարձնում և պնդացնում է առա-նքը, մաքրում է և պահպանում է ճնօտը:

Դիւնը դորակը 2 և 8 ֆրանկ. ֆոշին՝ արկղիկը 1 ֆրանկ 25 տանտ. Պատա՛ արկղիկը 2 ֆրանկ:

Հիմնադրութիւնը գոյութիւն ունի 1804 թ.ից. Դիւնաւոր աղէտը SEGUN, Բորդօ (Ֆրանսիա). ԹԻՖԼԻՍԻՈՒՄ ծախվում է պ. Բերկովսկի մազաղանի ուրիշ մազաղաններում: ՎԼԱԴԻՄԻՐ ԱՎԱՍՏՈՒՄ. Է. Ա. Էնկէնի և Գ. Ա. Օտիսի մօտ:

23—48 (ե. շ.)

ԹՈՒՆԻՍԻՆԵԱՄԱՐ Ս. ՊԵՏԵՐԲՈՐԳԻ ՄԱՅՐԱՔԱՂԱՔԻ ԲԺՇԿԱԿԱՆ ՎԱՐՁՈՒԹԵԱՆ

Էլէքսիր-Melange. Մաղերի արագ և առատ բուսաց-նելու համար և նրանց պահպանե-լու թափուկութեան համար, զործածու-թեան հրահանգի հետ միասին, ուս-ուրէն, ֆրանսերէն և գերմաներէն լե-զուով:

Բաղադր.— Eu- genie. Դափնեա և պաակի փուռի ծաղիկներից, ե-րևոյն, շինքին և ձեռքերին քնք-շովիւն և փոփ-կութիւն, նոյն-պէս և մարմարի-օնի սպիտակու-թիւն տալու հա-մար, չուշանի և վարդի անուշա-հոտութեամբ, նոյն պէս կաշու անհարթութիւնը և բիծերը ուղեւորներու: Գինը 1 ռ. 75 կ. սրուա-կի համար, զործածութեան հրահանգով ուսուրէն, ֆրանսերէն և գերմաներէն լեզուներով:

Կարմաղեղ.— Eugenie. Ներուկ, թուրքերի և ականջերի բնական վարդի գոյն տալու, որ չէ փոխվում էլէկտրական լուսաւորութեան ժամանակ և որ չէ սրբում երեսի ջրով: Գինը 1 ռ. 50 կ. սրուակի համար, զործա-ծութեան հրահանգով ուսուրէն, ֆրանսերէն և գերմաներէն լեզուով:

Այդ բոլոր երեք կոսմետիկական արդիւնքները բժշկական վարչութեան վկայութեամբ, չեն պա-ռնակում իրանց մէջ որ և է միասակար նիւթեր:

ԱՐՏՈՆԻԹԻՒՆ ՍԱՅՏԱԾ ՊՕՄԱԴ

Իսկական «Pasta Eugenie», զերազանց միջոց կաշու ամեն տեսակ բծերի, և երեսի վրա պատա-հող ուրիշ անարդիւնք երևոյթների դէմ: Տալիս է երեսի գոյնին երկտաւարական թափուկութիւն և գեղեցկութիւն: Գինը մի սրուակի համար 1 ռ. 60 կ.

Քինին-զիլեցերինեան պոմադ տերուական բաղադրից, մաղերը անդաքննելու, խտացնելու և մե-ծացնելու համար: Գ. 2 ռ. սրուակի համար:

Ձեռքերի պոմադ: Գինը սրուակի համար 1 ռ. 30 կ.: Խրաքանկի սրուակի վրա գտնվում է պաշտպանողական դրոշմ, մի «Երեւոյն» և հնարող ստորագրութիւն «Bertha Ries».

Իսկական «Poudre-Eugenie» սպիտակ և վարդագոյն փոշի. Գ. արկղիկի, վրձնով 1 ռ. 50 կ. առանց վրձնի 1 ռ. 20 կ.

Մաղերի ներկը երեք գոյնի. սև, շագանակագոյն և բաց-շէկ. Գ. արկղիկի 3 ռ. Ներկը «Բիս Գուտանի» զործարանի:

Դիւնաւոր պահեալ ԹԻՖԼԻՍԻՈՒՄ գտնվում վ. Գրիվն ակի ղեղատան աղանդների մազաղ-նում, «Լօնդոն» հիւրանոցի տակ, Զուրաւովի տանը:

94—100



Գ. ԿԵՐԵՐԻ

ԵՐԱՇՏԱԿԱՆ ՄԱԳԱՋԻՆՈՒՄ
Հերոֆոնների ֆարիկայի միակ աղէտի մօտ, կով-կասում, Միքայելեան փողոցում, № 84, ստացված են մեծ քանակութեամբ

ՀԵՐՈՓՈՆՆԵՐ

Կատարելադրված, զուրկան ձայնով, նոյնպէս լաւ ընտրութիւն նոտաների Հերոֆոնի համար: Օտարա-քաղաքացիների պահանջները ճշգրտութեամբ և առա-ջին փոստայով են կատարվում: Նոտաների կատա-լոգները թէ Հերոֆոնների և թէ Արիստոնների հա-մար, ըստ պահանջման ուղարկվում են անվարձ:

10—20

Յ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Ի Ի Ն Ն Ե Ր

ԹԱՄԱՋԻՆ ՄԱՍՆԱԻՈՐ ՀԻՒՆԻԴԱՆՈՑ

(Կուկիա, Վօրոնցովի արձանի հանդէպ)

Հիւանդներին ընդունում են ամեն օր

Ա Ռ Ա Ւ Օ Տ Ն Ե Ր Ը

ՆԱԻԱՍԱՐԴԻԱՆ—10—11 ժ. վիրաբուժական, վնասական և ատամի ց.
ԿԻՆ—բժշկի ԻՍԱՀԱԿԵԱՆ—9—10 ժ. կանանց և երեխայոց ց.
ՐՈՒԳԻՎՈՍԿԻ—10—11 ժ. ներքին, երեխայոց և կանանց ց.
ԿԻՆ—բժշկի ԿՕՐՕՆԱ—11—12 ժ. կանանց և երեխայոց ց.
Ա. ԳՈՒՐԿՈ—12¹/₂—1¹/₂ ժ. աչքի և ներքին ց.
ՉԱՅԵՎՍԿԻ—12—1 ժ. ջղային ց. և էլէկտրականութեամբ:
ԱՐՏԵՄԻԵՎ—12—1 ժ. երեքշաբթի և ուրբաթ կանանց ց.
ԵՐԵՎԱՆԵՐԸ

ՆԱԻԱՍԱՐԴԻԱՆ—6—7 ժ.
Հիւանդանոցում է մահ կա բարձր Մ Օ Պ Ք Ր:
ՎՃԱՐ—50 կ.: Համախորհրդի (Կոնսիլիումի) համար համաձայնութեամբ:
Հիւանդանոցի վերատեսուչ ՆԱԻԱՍԱՐԴԻԱՆ

Ձեռնարկ «ԿԵՐԵՐԻ» կամ ԿՈՎԿԱՍԵԱՆ ՍՆՆԻՍԱՐԻ ԽՄԻՉԲ պատրաստելու հա-մար: Փոխ. պրովիդ. օգն. Արտեմ Թադէոսեան: Գինն է 15 կոպէկ:
ԹԻՖԼԻՍԻՈՒՄ պահեալ—Կենտրոնական Գրաւաճառանոցում, ԵՐԵՎԱՆԻՈՒՄ Դատա-մեանի խանութում:

3—5